

ՄԱՍԿ

Հարեկան զինք 7 բուր, կես տարվան 4 բուր:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արսիսանեանի խանութում:

Օտարադաշտացիք զինում են ուղղակի

Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատանը բաց է առաօտեան 10—2

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն շաբաթ:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԱՍԿ

Լրագրի խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ կես տարվայ բաժանորդական զինք լինել են, տուել խմբագրութեանը, շտապել լրացնել իրանց բաժանորդագիրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերի դրութիւնը Թիֆլիսում: — Ներքին և արտաքին: Պատերազմական բեմից: Կնէ է պատճառը: Նամակ Գորուց: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին լուրեր: Կերական և քաղաքական: Թիֆլիս: Արտաքին լուրեր: — Խառն լուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍԻՆ

Մեր լրագրի թղթակիցներից հաղորդված լուրը թէ քուրդերը և բաշբուզուկները անինայ կոտորում են Հայաստանի քրիստոնէայ ազգաբնակիւթիւնը, ստուգվում է այժմ յուլիսի 3-ին Ալեքսանդրապոլից հաղորդված պաշտօնական հեռագրով, որի մէջ ասված է թէ գնեւերալ Տէր-Վահագնով մտնելով Բայազետ, գտաւ այդ քաղաքը այնպիսի մի աւերակ դրութեան մէջ և այնքան ծածկված բնակիչների գիակներով, որոնց թիւրքերը բոլորին էլ անինայ կոտորել են, որ զօրքին այնտեղ մնալը անհնարին եղաւ:

Ուրեմն թիւրքերն կոտորում է իր սեփական հպատակներին:

Թիւրքահպատակ քուրդերը և բաշբուզուկները միանալով Պարսկաստանին հպատակ Մակուի խանութեանց եկած բազմաթիւ արիւննարու քուրդերի հետ, սկսեցին աւերել հայոց գիւղերը, բռնաբարել կանանց և սպանել մարդիկներին: Թիւրքաց տէրութիւնը որ հարկ է վերցնում իր հպատակ հայերից, մի և նոյն ժամանակ ոչինչ չէ անում իր այդ հպատակներին քուրդերի և բաշբուզուկների դէմ պաշտպանելու համար, անգոր է զսպել նրանց կատաղի արշաւանքները հայոց ազգաբնակիւթեան դէմ: Թիւրքաց տէրութիւնը իրան պատասխանատու չէ համարում քուրդերից և բաշբուզուկներից Հայաստանում գործված բարբարոսութիւնների համար:

Ո՞վ է կառավարում ուրեմն Հայաստանը:

Հայերը անհամբերութեամբ սը-

պառում են ուսաց զօրքի գալուստ, և որտեղ որ զօրքը գալիս է, հայոց ազգաբնակիւթիւնը ընդունում է ուսաց զօրքը իր հոգևորականութեան առաջնորդութեամբ խաշով և խաչվառով: Բայց հէնց որ ուսաց զօրքը հեռանում է այս կամ այն տեղից ստրատեգիական սր և է կարգադրութեան պատճառով, իսկայն թիւրքերը և քուրդերը մտնում են ուսաց զօրքից թողված տեղերը և անինայ կոտորում են բոլոր քրիստոնէայ բնակիչներին:

Եւ այդ անողորմ, անլսելի կոտորածքի վրա միթէ՞ լուսաւորված Եւրոպան պէտք է անտարբեր աչքով նայէ, — և այդ բաւական չէ՞ միթէ՞ Նիդիւն պէտք է շարունակէ օգնել Թիւրքիային իր փողով, զինուորական և ուտելիքների պաշարով, կատարելագործված գէնքերով և իր տսուէնական օֆիցէրներով, որոնցով, ասում են լի է Փոքր-Ասիայի թիւրքաց զօրքը:

Ուրեմն թիւրքաց տէրութիւնը իրան պատասխանատու չէ համարում քուրդերից գործված բարբարոսութիւնների համար, ասելով որ ոչինչ պաշտօնական, կառավարչական ներգործութիւն չունի թէև իրան հպատակ, բայց իբր թէ անկախ թափառական քուրդերի վրա:

Ետում են որ նոյնը պատասխանել է և Պարսկաստանը, երբ, ինչպէս մեզ գրում են, Ալեքսանդրապոլից առաջարկութեամբ թիւրքաց տէրութիւնը Պարսկաստանի տէրութեանը հարց էր աւրել թէ ի՞նչ է նշանակում որ Մակուի խանութեան պարսկահպատակ քուրդերը թափվելով թիւրքաց պետութեան սահմաններում, աւերում են գիւղերը և կոտորում են թիւրքահպատակ ժողովուրդը: Եւ, պարսից տէրութիւնը, ասում են, նոյնպէս պատասխան է տուել թէ ոչինչ ներգործութիւն չունի իր հպատակ քուրդերի վրա և չէ կարող ոյժ չունի զսպել նրանց կատաղի արշաւանքը թիւրքաց Հայաստանում:

Ուրեմն եթէ ոչ թիւրքերն և

ոչ Պարսկաստանը պատասխանատու են իրանց մոլեռանդ, կատաղի, փայրենի հպատակներից գործված բարբարոսութիւնների համար, չը նայելով որ այդ պետութիւնները վերցնում են հարկեր իրանց հպատակներից, ուրեմն պէտք է պարտադրելին կառավարել և պաշտպանել իսողաղ քաղաքացիներին, — ո՞վ է, ուրեմն, Հայաստանի տէրը, ո՞վ է կառավարում այդ երկիրը... ոչ որ:

Եւ յիշում երբ որ զարթել է արևելեան հարցը, երբ յայտնվել է պատերազմը, երբ Ռուսաստանը, որի վրա է հայերի ամբողջ յոյսը, դուռն է բարձրացրել արևելեան քրիստոնէաների պաշտպանութեան համար, — վստահանում ենք կարծել որ հայերն էլ իրաւունք ունեն լուսաւորված աշխարհի ուշադրութիւնը իրանց ողորմելի դրութեան վրա դարձնելու, ոչ թէ միայն որպէս քրիստոնէայ ազգ, բայց և որպէս աշխարհիս առաջին քրիստոնէական ազգ: Յայտնի է որ Հայաստանը աշխարհիս բոլոր ազգերից ամենից առաջ է ընդունել քրիստոնէութիւնը:

Եւ, Հայաստանում քրիստոնէութիւնը սկսել է տարածվել դեռ Քրիստոսի կենդանութեան ժամանակ:

Եւ միթէ դորա համար է պատժվել միշտ և պատժվում է Հայաստանը, որ յանդգնել է ամենից առաջ ընդունել քրիստոնէութիւնը:

Հայաստանը քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, նորան շրջապատող արևադարձ և չէթանոս ազգերը և յետոյ մահմետականները նորա անինայ թշնամիներ են դարձել:

Եւ, բանը նորա երբէք չը կարողացան ներել Հայաստանին: Քրիստոնէութիւնը ընդունելու օրից Հայաստանը մինչև այսօր տանջվում և չարչարվում է քրիստոնէութեան համար:

Եւ, դեռ բաւական չէ: Մնացած քրիստոնէական ազգերը թրշնամացան Հայաստանի դէմ: Բիւզանդիայի յունադաւան եկեղեցին երբէք չը կարողացաւ ներել հայերին, որ նոյն չը միացան նորա

հետ, այլ հիմնեցին և պահպանեցին իրանց ազգային եկեղեցի: Կաթօլիկութիւնը թշնամացաւ Հայաստանի դէմ, որովհետև համոզվեցաւ որ չէ կարողանում ընդունել տալ հայերին կաթօլիկութիւնը, և մինչև այժմ կաթօլիկ հայերը մի շատ աննշան ստիպութիւն են կազմում հայոց ազգի մէջ:

Եւ եթէ վերջին ժամանակները կաթօլիկ Փրանսիան Նապոլէոն III-ի ժամանակ իր արևելեան քաղաքականութեան մէջ ցոյց էր տալիս իր համակրութիւնը դէպի հայերը, — այդ համակրութիւնը կեղծ էր: Փրանսիան համակրում էր միմիայն կաթօլիկ հայերին, և ոչ թէ մինչև անգամ բոլոր կաթօլիկ հայերին, այլ գլխաւորապէս հասուն և աննեւ իր, այսինքն պապի անխաղութեան պաշտպաններին:

Նշված, ջարդված, անարգված, կոզդպոված, ոտնակոխ արած, կոտորված, մեռցրած Հայաստանը վերջին օգնութեան աղաղակ է գրցում դէպի Ռուսաստանը և արևմտեան Եւրոպան, դէպի ամբողջ լուսաւորված աշխարհը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Ալեքսանդրապոլից յուլիսի 3-ին հաղորդված պաշտօնական հեռագիրը ասում է՝ Գնեւերալ Տէր-Վահագնով մտնելով Բայազետ գտաւ այդ քաղաքը այնպիսի բանդված և աւերակ դրութեան մէջ, և այնքան ծածկված բնակիչների գիակներով, որոնց թիւրքերը բոլորին էլ անինայ կոտորել են, որ զօրքին այնտեղ մնալը անհնարին եղաւ: Այդ պատճառով Երևանեան զօրքը ժամանակաւորապէս կենտրոնացաւ Երզնիի կողմը, որտեղից այս օրերս դուրս կը գայ սահմանակից գծի վրա: Զայմից յուլիսի 2-ից պաշտօնապէս հեռագրում են որ թիւրքաց զօրքերը չեն երևում Ղարսի այս կողմը: Գլխաւոր յիշելը կանգնած են նոյն գիւղեր վրա Զայմից մինչև Աջա-Բալա: — Գնեւերալ Կոմարով որ վերջ է ստացել փախուստը դրութեան մէջ է:

ԻՆՉ Է ՊԱՏԱՌԸ

Մենք շատ անգամ առիթ ունեցանք լսել զանգատներ թէ մեր հայոց լրագրութիւնը կամ բոլորովն ոչինչ առաջադիմութիւն չէ անում, կամ շատ դանդաղ քայլերով առաջ է գնում: Շատերը պարմանում են (մանաւանդ

կարծիքն հետագայի: Գլխավոր զորքերի կա-
ռավարչը ուղարկել է չորս հազար զինվոր հե-
ռավոր:

«Кавказ» լրագիրը ստացել է Ս. Պետեր-
բուրգից հետևյալ հեռագիրը. «Բուսակ փողերի
կուրսի մասին: Բուսակ փողերի փոխանակու-
թիւնը երեք ամսով, սկսած յուլիսի 2-ից արժէ,
1, օնգ օնի վրա 2440 պէնս, փարիզի վրա
25550 ֆրանկ, 500 ֆրանկի ներքին փոխա-
նակութեան տոմսերը արժէ 208 ֆրանկ և 50 կոպէկ,
երկրորդը 208 ֆրանկ, պետական բանկի 500
տոմսերը առաջին շրջանի արժէ 94 ր. 37 կոպ.,
երկրորդ շրջանի 92 ր. 75 կոպ., 51200 րէնտա
100 ֆրանկ, պոլսկի շրջանի արժէ 8 ֆրանկ 12
կոպէկ:

«Северный Вестник» լրագիրը հաղորդում է
որ մինչև յուլիսի 24-ը արևելեան փոխա-
նակութեան տոմսերը փոխանակուելու համար էր
120 միլիոն ֆրանկ: Գումարները մեծ մասամբ
մոտեցնում են ամբողջութեամբ, այնպէս որ սոս-
րագործները փողով հասած է արդէն 80 մի-
լիոն:

«Кавказ» լրագիրը ստացել է հետևյալ հե-
ռագիրը Ս. Պետերբուրգից: Առաջին ներքին
փոխանակութեան տոմսի մէջ, որ կատարվեցաւ
յուլիսի 1-ին, զիջուած տարած գումարները բն-
կան հետեւեալ նախշերով վրա:

№ սերի	№ տոմ.	Տարած գումար:
8,806	48	200,000
16,738	12	75,000
8,622	38	40,000
9,018	26	25,000
16,581	3	
172	20	10,000
5,075	11	
14,552	32	
15,013	30	
7,193	5	8,000
8,589	42	
1,633	46	
15,919	38	
16,349	32	
12,508	46	
12,308	44	
17,489	46	
18,324	2	
794	39	
15,358	38	
4,209	44	
18,237	49	
19,800	29	
13,471	23	
6,304	41	
1,199	11	
8,641	24	
4,054	32	
17,101	17	
1,627	4	
9,313	13	1,000
5,122	4	
908	12	
965	3	
3,303	7	
81	31	
10,806	15	
13,771	32	
96	48	
17,202	40	
5,176	49	

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ

Շատերը կարծում են որ ֆրանսիայի վեր-
ջին անցքերը ունեն սպառնող, պատերազ-
մական նշանակութիւն: Ի հարկէ ֆրանսիայի
պատերազմական այդ ցանկութիւնները կա-
րող են միայն Գերմանիայի դէմ ուղղված լի-
նել: Բայց մենք չենք հաւատում այդ նախա-
գուշակութիւններին:

Ի՞նչ էր շահ ֆրանսիա ի՞նչ պատերազմ
սկսէ Գերմանիայի դէմ:—Ոչինչ: Ընդհակա-
ռակն կարող է դարձաւ զանազան, որովհետեւ
այն ժամանակ Բաւարիան էլ կը լինէր Գերմա-
նիայի կողմը: Այն մարզիկ որոնք ճանաչում
են, ուսումնասիրել են ֆրանսիա և նրա զե-
նուորական կազմակերպութիւնը, ասում են,
որ չը նայելով ի՞նչ ֆրանսիական զօրքը շատ
լաւ է կազմակերպված, բայց այնու ամենայ-
նիւ նա զեռ չէ կարող միջոցութեան անել զե-
մանական զօրքի հետ:

Ճշմարիտ է որ ի՞նչ ֆրանսիական կրկին միա-
պետութիւնը դառնայ, նա կարող է պատե-
րազմական ձգտումներ ունենալ, որովհետեւ
այդ երկիրը իր պատմութեան մէջ ապացու-
ցել է ի՞նչ էր ընդունում էր միապետութեան
ձեռք միշտ պատերազմական փառք էր ներ-
կայացնում հարեան երկիրներին և միայն
հանրապետական ֆրանսիան անկասկած է լի-
նում իր հարեանների համար, միայն հան-
րապետական ֆրանսիան խաղաղական է,—
բայց այնու ամենայնու մեզ անհաւատարմ է
թվում որ ֆրանսիայի այժմեան կառավարու-
թիւնը այդքան կարճատեւ, այդքան անզոր-
նական լինէր, որ սկսէր պատերազմ կամ ու-
նենար ձգտումներ և ցանկութիւններ դէպի
պատերազմ: Դա կը լինէր մի մեծ, անհե-
րելի սխալ ֆրանսիայի կողմից:

Ճշմարիտ է վերջին ֆրանսիական և գերմանական
պատերազմից յետոյ ֆրանսիական ազգը չէ
կարող մոռանալ որ յաղթված է եղել որ
նրանից խել են նորա ամենալաւ նահանգ-
ները մինը,—բայց վերջին ժամանակները,
ֆրանսիական հասարակական կարծիքը որ
գոռում էր վրէժի զրուծութիւն Գերմա-
նիայի դէմ, մասամբ համոզվեցաւ որ Լօթա-
րինգիան և մանուսից Էլզասը անգարձ փո-
րած նահանգներ են ֆրանսիայի համար, և
ֆրանսիական ինտելիգենցիայի մի մաս սկսեց
ապացուցանել որ վրէժիպետութիւն խօսքը
չը պէտք է պատերազմի խօսքով հասկա-
նալ, այլ այդ վրէժիպետութեան գործը պէտք
է կատարվի խաղաղական կերպով: Այդ մար-
դիկ իրաւամբ ասում էին և ասում են որ
ֆրանսիան պէտք է վրէժիպետի լինի իր ներ-
քին կեանքը, իր արդիւնազորութիւնը, իր
ներքին հարստութիւնները, իր լուսաւորու-
թիւնը, վերջապէս իր ներքին ոյժը զարգաց-
նելով:

Մենք կը կորցնէինք յարգանք դէպի եւ-
րոպական լուսաւորութիւնը, դէպի ժամա-
նակակից քաղաքակրթութիւնը, մեր աչքում
փայլ կրնային լուսաւորված աշխարհի հեղե-
նակութիւնը, ի՞նչ էր եւրոպական երկու ամե-
նապատկառութիւնը կրկին ֆրանսիայի
և Գերմանիայի մէջ կրկին կը ծագէր պատե-
րազմ, մասնաւոր է ի՞նչ ֆրանսիայի կողմից
զրկող ոյժերը լինէին բռնապետական և կրե-
րական կուսակցութիւնները, ի՞նչ էր պատե-
րազմի շարժառիթը լինէին՝ վրէժիպետու-
թեան գագաթները կորած նահանգների հա-
մար, դարդակ ցանկութիւնը կրկին եւրոպա-
կան առաջին վերնուրական պետութեան
փառքը փայլելու և վերջապէս ձգտումը
Հռոմի պապի աշխարհական իշխանութիւնը
վերականգնելու:

Մենք ֆրանսիայի մասին աւելի լաւ կար-
ծիք ունենք և համոզված ենք որ նա չի
անի այդ տեսակ մեծ քաղաքական սխալ:
Մենք հաւատում ենք որ եւրոպական քաղա-
քակրթութիւնը դարձակ խօսք չէ, և որ
այսուհետեւ արեւմտահեղութիւնը, պատե-
րազմը անհնարին է եւրոպական ամենալու-
սաւորված երկու երկիրների մէջ:

ԹԻՐԻՔԻԱ

Բոլոր անցած պատերազմներում Բուսաս-
տանի և Թիւրքիայի մէջ, ռուսաց զօ-
րքերը միշտ յաղթող էին հանդիսանում, չը
նայելով որ շատ անգամ ռուսաց զօրքը թի-
ւով աւելի փոքր էր, քան ի՞նչ թիւրքաց:
Թիւրքաց զօրքը, ճշմարիտ է, ունի իր լաւ
կողմերը՝ սուլթանի չափաւոր ապրուստին սո-
վոր լինելը, բոլոր նիւթական արդիւններին
զարմանալի համբերութեամբ և սովորու-
թեամբ դիմանալու ընդունակութիւնը, բայց
և այն էլ յայտնի է, որ թիւրքաց զօրքերը երբ
պատահում են ռուսաց զօրքերին բաց դաշտի
վրա, միշտ յաղթվում են: Թիւրքաց սուլթանը
որքան քաջ է պատերազմում և իրան պաշա-
պանում բերդերում, ամրացած տեղերում,

մարտկոցներում, այնքան լծալ և վախկոտ է
բաց դաշտում:

Բոլոր լրագիրների թղթակցները, թիւր-
քաց պաշտօնական և եւրոպական կիսապաշ-
տօնական տեղեկութիւնները հաղորդում են,
որ այժմեան Թիւրքաց զօրքը շատ բազմա-
թիւ է ի՞նչ էր նախկին և ի՞նչ էր եւրոպական
Թիւրքիայում: Ամենք վկայում են նոյնպէս
ի՞նչ թիւրքաց զօրքը ունի շատ ընտիր զեն-
քեր, վերջին ձեռի կատարելագործված հրա-
ցաններ և հիանալի թիւղանոթներ, ունի շատ
լաւ արտիլերիա, բայց որ աւելի էլ զարմա-
նալ է նրան երբեք չէ պակասում ուտելիք-
ների և պատերազմական պաշարը:

Աւելին այդ ընկած, անսկզբած պետու-
թիւնը, այդ ողորմելի, աւերված, քանդված,
ներքին երկպառակութիւններից բաժանված
Թիւրքիան որտեղից այդքան ոյժ, զօրութիւն
ունի: Անկարելի է որ նա այդ ոյժերը քա-
ղէ իր սեփական ներքին կազմակերպութի-
ւնից, որ ճշմարիտ կատարելապէս փառած է:
Պէտք է կարծել որ օտարները օգնում են
Թիւրքիային,—բայց ո՞րքեր են այդ օտար-
ները,—կարելի է գուշակել բայց հաստատա-
պէս ասել անկարելի է:

Հարցնում ենք՝ ի՞նչ շահ ունի մի որ և է
եւրոպական, լուսաւորված երկիր օգնելով
Թիւրքիայի պէս դիակ դարձած քաղաքական
մարմին, արուեստական կերպով պահպանե-
լով նրան, ի փառ նրա կենդանի և իրանց
սեփական կենսքով ապրելու ընդունակ թիւր-
քիա-հպատակ քրիստոնեայ ազգաբնակչութիւն-
ներին:

Ի՞նչ ուրիշ շահ կարող է ունենալ բացի
կապան, առեւտրական շահից:

Ցաւալի է որ շատ անգամ լուսաւորված
եւրոպայի գործունէութեան շարժառիթը և
ուղեցույցը չեն լինում ընդհանուր մարդասի-
րական, արդար զգացմունքները, այլ մինչև
այժմ եւրոպական մի քանի երկիրները հե-
տեւում են իրանց քաղաքականութեան մէջ
կապան, հարստահարող մանրամասնների
քաղաքականութեանը:

Եթէ ճշմարիտ պատերազմից յետոյ հաս-
տատապէս յայտնվի որ եւրոպական այս կամ
այն երկիր օգնում էր Թիւրքաց զօրքին փո-
ղով, կատարելագործված զենքերով, զենու-
րական և ուտելիքների պաշարով ու գիտնա-
կան օժիցներով և զօրապետներով,—ամեն
մի մտածող, զգացող մարդ ստիպված կը լինի
ասել՝ ամօթ լուսաւորված եւրոպային:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Голос» լրագիրը մի մասնաւոր հեռագիր է
ստացել Բաղդադից յուլիսի 1-ից (13), որի մէջ
ասվում է որ հաւատարմութեան արժանի աղ-
բերներից տեղեկանում են որ յարձակողական
և պաշտպանողական դաշնագրութիւնը կապված
է Սերբիայի և Չէրնոգորիայի մէջ և ստորագր-
ված է արդէն Միլան և Նիկոլայա իշխաննե-
րից: Ասում են որ չէրնոգորիները այժմ պէտք
է միանան սերբիական զօրքի հետ: Չէրնոգո-
րիայի Ալեքսանդր արքային կատարելապէս
ապահոված է:

Բաղդադից հեռագրում են որ յուլիսի 1-ին
թիւրքաց տերութեան ներկայացուցիչները պայ-
ման կապեցին այսուեւր Լոյզ չուգանաւերի ըն-
կերթիւն հետ 45 բառաբանի զօրք և պատե-
րազմական պաշար: Գումանի վրա հասցնելու հա-
մար:

Պարիզից հեռագրում են որ լուր կայ իրը
ի՞նչ պատգամաւորների ժողովի համար նոր ընտ-
րութիւնները կը նշանակվեն հոկտեմբերի 14-ին:

Փարիզի լրագրութիւնը խօսելով Բաղդա-
դիայում պատահած անցքերի մասին, ասում է
որ ռուսաց զօրքի գնալուց առաջ գնալու պատ-
ճառը ռուսիկներին պաշարը դժուարութեամբ
տեղը հասցնելու մէջն է կայանում: Բայց այնու-
ամենայն ֆրանսիական լրագրութիւնը համա-
րում է անկասկածելի ռուսաց զօրքի ապագա-
յում յաղթող հանդիսանալ:

Չէրնոգորիները արդէն յարցախոյզական
գիրք են բռնում:

Բերլինից հեռագրում են յուլիսի 25-ից որ
յուլիսի 24-ին իշխան Բաւարի անդլիական զե-
պանին ընդունելուց յետոյ, թողեց Բերլին և
գնաց Վալդի:

Հռոմի պապը ստատիկ հիւանդ է, նրա կեն-
քին վտանգ է սպառնում:

Անգլիական «Morning Post» լրագիրը լսել
է որ անգլիական պարլամենտը կը փակվի օգոս-
տոսի 10-ին, նոր տոմարով:

Վիեննայից հեռագրում են՝ «Բուխարեստից
գրում են Վիեննայի «Presse» լրագրին որ իշ-
խան Չէրկասկուն յանձնված է կազմել բոլորա-
բայիններից մի գունդ, որի մէջ պէտք է ծառա-
յին զէնք կրելու բոլոր ընդունակ բոլորացի-
ները»:

Լոնդոնից հեռագրում են յուլիսի 1-ից (13)
որ Անգլիական բանակը յայտնեց 200 հազար
Լուրեր էին տարածված իր թէ լոյզ Բիլիոն-
ֆիլդ պէտք է հրաժարական տար միլիտարի
պաշտօնից, բայց այդ բուրքերը սոստ յայտնվե-
ցան:

Հեռագրում են որ Թիւրքերը Բաղդադի-
յում շարունակում են անշարժ դիրք բռնել, և
հաւանգուտ կերպով ամրացնում են Բալխանեան
անցքերը:

Թիւրքաց արտաքին գործերի մինիստր
Սաֆֆետ-փաշա յայտնեց խրատախին որ Սեր-
բիայի իշխան Միլանից ասված ճառը սերբիա-
կան պարլամենտի բացման ժամանակ հակա-
սովետական մէջն է գտնվում այն հպատակ դիրքի
հետ որ բռնած էր Սերբիան խաղաղական պայ-
մանները Թիւրքիայի հետ կապելու ժամանակ:
Սաֆֆետ-փաշան ասելաւ նաեւ որ Սերբիան
միայն Թիւրքիային պարտական է իր անկախու-
թեամբ և այդ բանը Թիւրքաց տէրութիւնը կի-
մանայ յիշեցնել իշխան Միլանին:

Լոնդոնից հեռագրում են որ Միջերկրական
ծովի վրա գտնվող անգլիական նաւատորմը
չունի զօրք, այլ անգլիական նաւերի նպատակն
է՝ հսկել Յոնատանի վրա:

ԲԱՆՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհաւորում ենք ռուսաց «Донским Плата»
լրագիրը, որի հրատարակիչը և խմբագիրը մի
նայ է, պ. Տէր-Աբրահամեան, որ քաջութեամբ
ձայն է բարձրացրել հայոց ազգի իրաւունքների
համար: Լրագիրը իր վերջին համարներում տպել
է յօդուածների մի շարք («Краткие исторические,
статистические и этнографические очерки об Армя-
вах»), վերնագրով: Թող լրագիրը շարունակէ այդ
ուղղութեանը հետեւել, և նա բացի իր տեղա-
կան օգուտները և շահերը պահպանելուց, կա-
րող է ռուսաց լրագրութեան մէջ միակ լրագիր
լինել որ կը համարվի հայոց օգուտների օրգան
Խուսառոտանում Դամանակ է արդէն նախա-
պաշարմունքները կողմը գցել և պէտք է խոս-
տովանվի որ ընդհանուր քրիստոնէական խնդրի
մէջ, այժմեան արեւելեան խնդրի մէջ հայերը
նայնքան իրաւունք ունեն իրանց համար լուսա-
ւորված աշխարհի համակրութիւնը պահանջել,
որքան ուրիշ թիւրքիապաշտակ քրիստոնեա-
ները: Գուցէ և աւելի, եթէ յիշենք պատմական
իրողութիւնը և ֆրանսիացի երեկել Saint-Martin
(Սէն-Մարտէն) գիտնականի նշանաւոր խօսքերը
կրկին ենք՝ «Հայերը աշխարհիս երկին առաջին
ազգ են, որոնք ընդունած են քրիստոնէու-
թիւնը»: Ռուս լրագիր վերե յիշված յօդուածը
վերջանում է մօտաւորապէս այս խօսքերով՝
«Այժմեան մեծ անցքերը աչքի առջև ունեւում
որոնց ձեռնարկել է մեր Ազգութեան Կայսրը,
Թիւրքիապաշտակ քրիստոնէաների դրութիւնը
բարեփոխելու համար, մենք մեզ թալ կը տանք
յուսով որ և Թիւրքիայի Հայերի դրութեան մէջ,
—որոնք խմբին իրանց տարապանքների բա-
ժակի վերջին կաթիլը, և որոնց մարդկային համ-
բերութեան չափը հասած,—նոյնպէս կը կա-
տարվեն արմատական վերանորոգութիւններ,
մեր Ամենազորեման Կայսրի կամքով»:

Այն մի զեղեցիկ արմատութիւն: Մի նայ ճա-
նապարհորդ, որ այցելել է հայութեան երեք
գլխաւոր կենտրոնները՝ Թիֆլիս, Նիքան և Կ.
Պոլիս, անում է հետեւեալ նկարագրել այդ երեք
քաղաքները հայ հասարակութեան վրա: «Թիֆ-
լիս եկայ՝ հարուստը աղքատից չը փոխեցի,
Երևան եկայ՝ առողջը հիւանդից չը փոխեցի,
Կ. Պոլիս եկայ՝ իմարը խելքից չը փոխեցի»:

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷԼ